

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

21 դեկտեմբերի 2007թ.  
ք.Երևան

N 187

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍՈՒԹՅԱՆ 41-ՐԴ  
ՀՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏԻ 18-ՐԴ ԵՆՔԱԿԵՏԻ ԵՎ 72-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 2-ՐԴ ԿԵՏԻ  
ՏԱՐԱԲՆՈՒՅԹ ԸՆԿԱԼՈՒՄԸ ԲԱՑԱՌԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ  
ՊԱՐԶԱԲԱՆՍԱՆ ՍԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 41-րդ հոդվածի 1-ին կետի 18-րդ ենթակետի և 72-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթների տարաբնույթ ընկալումը բացառելու նպատակով և հիմք ընդունելով այն, որ.

1. Հանրապետության Նախագահի թեկնածու առաջադրված քաղաքացիները, Հանրապետության Նախագահի թեկնածուի կարգավիճակ ստանում են Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 89-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված ժամկետում որպես Հանրապետության Նախագահի թեկնածու գրանցվելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի համապատասխան որոշումն ուժի մեջ մտնելուց հետո:

2. Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 67-րդ և 68-րդ հոդվածները սահմանում են այն փաստաթղթերի ցանկը, որ անհրաժեշտ է ներկայացնել Հանրապետության Նախագահի թեկնածու առաջադրվելու համար, իսկ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 72-րդ հոդվածը սպառնիչ թվարկում է Հանրապետության Նախագահի թեկնածու առաջադրված քաղաքացիների իրավունքները, որպես Հանրապետության Նախագահի թեկնածու գրանցվելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը:

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 5-րդ հոդվածի համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովն իրավասու է Հանրապետության Նախագահի թեկնածու առաջադրված քաղաքացիներից պահանջել և ստանալ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 72-րդ հոդվածի 2-րդ կետում ամրագրված փաստաթղթերը, իսկ թեկնածու առաջադրված քաղաքացիներին Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում որպես Հանրապետության Նախագահի թեկնածու գրանցելու վերաբերյալ որոշումներն ուժի մեջ մտնելուց հետո Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 41-րդ հոդվածի 1-ին կետի 18-րդ ենթակետի համաձայն կազմակերպել նրանց կենսագրական տվյալների հրապարակումը:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 87-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետի համաձայն

**Պ Ա Ր Զ Ա Բ Ա Ն ՈՒ Մ Է .**

1. Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 41-րդ հոդվածի 1-ին կետի 18-րդ ենթակետի դրույթը չի կարող վերաբերել Հանրապետության Նախագահի թեկնածու առաջադրված քաղաքացիներին:

2. Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 72-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթները պետք է ընկալել դրանցում պարունակող բառերի տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի պահանջները և չլիդիսելով դրանց իմաստը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

**Գ. Ազարյան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

21 դեկտեմբերի 2007թ.  
ք.Երևան

N 188

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍՈՒԹՅԱՆ 13-ՐԴ  
ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ԵՎ 40-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏԵՐԻ ՏԱՐԱԲՆՈՒՅԹ  
ԸՆԿԱԼՈՒՄԸ ԲԱՑԱՌԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ  
ՊԱՐՁԱԲԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին և 40-րդ հոդվածի 1-ին կետերի դրույթների տարաբնույթ ընկալումը բացառելու նպատակով և հիմք ընդունելով այն, որ.

1. Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն Հայաստանի Հանրապետության ընտրողների ցուցակը, բացառությամբ զինվորական մասերում, կալանքի տակ պահելու հիմնարկներում կազմվող և ընտրողների ստորագրած ցուցակների, ազատ է ծանոթության համար:

Ընտրողների կողմից ստորագրված ցուցակները հրապարակման ենթակա չեն, դրանցից պատճեններ չեն հանվում:

2. Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 40-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն տեղամասային ընտրական հանձնաժողովի որոշումները, գործողությունները (անգործությունը) բողոքարկելու վերաբերյալ դիմումները, այդ թվում՝ քվեարկության արդյունքների վերահաշվարկի պահանջի մասին դիմումները, ներկայացվում են համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողով:

3. Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 40.2-րդ հոդվածի 8-րդ կետի համաձայն ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը քվեարկության արդյունքների վերահաշվարկն իրականացնում է ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների ամփոփման համար Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված պահանջներին համապատասխան, իսկ տեղամասային ընտրական հանձնաժողովը քվեարկության արդյունքներն ամփոփում է հանձնաժողովի նիստում:

Ընտրական հանձնաժողովի նիստերին կարող են ներկա գտնվել թեկնածուների վստահված անձինք, դիտորդներ, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներ:

4. Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 40.1-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն քվեարկության արդյունքները բողոքարկվելու դեպքում կողմն այլ փաստաթղթերի հետ միասին իրավունք ունի ծանոթանալու ընտրողների կողմից ստորագրված ցուցակներին: Դրանք բողոքարկող կողմը հրապարակելու և տպագրելու, քաղվածքներ կատարելու և պատճենահանելու իրավունք չունի:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 87-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետի համաձայն

**Պ Ա Ր Ձ Ա Բ Ա Ն Ո Ւ Մ Է .**

Ընտրողների կողմից ստորագրված ցուցակները հրապարակման ենթակա չեն, դրանցից պատճեններ չեն հանվում և քվեարկությունից հետո այդ ցուցակներին կարելի է ծանոթանալ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում քվեարկության արդյունքների վերահաշվարկի մասին դիմում ներկայացնելու դեպքում:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

**Գ. Ազարյան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

21 դեկտեմբերի 2007թ.  
ք.Երևան

N 189

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍՈՒԹՅԱՆ 63.2-ՐԴ  
ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ԵՎ 86-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ԿԵՏԵՐԻ ՏԱՐԱԲՆՈՒՅԹ ԸՆԿԱԼՈՒՄԸ  
ԲԱՑԱՈՒԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 63.2-րդ հոդվածի 3-րդ և 86-րդ հոդվածի 2-րդ կետերի դրույթների տարաբնույթ ընկալումը բացառելու նպատակով և հիմք ընդունելով այն, որ.

1. Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 63.2-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն կենտրոնական ընտրական հանձնաժողովն ամփոփում է համապետական ընտրությունների արդյունքները ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում տեղամասերում քվեարկության արդյունքների հետ կապված բողոք լինելու դեպքում քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 7 օր հետո, հիմք ընդունելով ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներից ստացված՝ ընտրական տեղամասերում քվեարկությունների արդյունքների վերաբերյալ արձանագրությունները, դատարանների վճիռներն ու ընտրատարածքներում կատարված վերահաշվարկների արդյունքները:

2. Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 86-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն Հանրապետության Նախագահի ընտրությունը ցանկացած փուլում անվավեր է ճանաչվում, եթե ընտրության նախապատրաստման և անցկացման ընթացքում տեղի են ունեցել ընտրական օրենսգրքի այնպիսի խախտումներ, որոնք կարող էին ազդել ընտրության արդյունքի վրա:

3. Կենտրոնական ընտրական հանձնաժողովը համապետական ընտրությունների արդյունքներն ամփոփում և արձանագրությամբ վավերացնում է դրանք Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 63.2-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն, Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 83-րդ հոդվածի համաձայն ընդունում որոշում Հանրապետության Նախագահ ընտրվելու կամ քվեարկության երկրորդ փուլ անցկացնելու կամ ընտրությունը չկայացած ճանաչելու և Հանրապետության Նախագահ չընտրվելու կամ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 86-րդ հոդվածով նախատեսված հիմքերի առկայության դեպքում ընդունում որոշում ընտրությունն անվավեր ճանաչելու և Հանրապետության Նախագահ չընտրվելու մասին:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 87-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետի համաձայն

**Պ Ա Ր Զ Ա Բ Ա Ն ՈՒ Մ Է .**

1. Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 63.2-րդ հոդվածի 3-րդ կետի և 86-րդ հոդվածի 2-րդ կետի միջև հակասություն չկա:

2. Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 63.2-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջը պետք է ընկալել դրանում պարունակող բառերի տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի պահանջները և չփոխելով դրա իմաստը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

**Գ. Ազարյան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

28 դեկտեմբերի 2007թ.  
ք.Երևան

N 190

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 21-ՐԳ  
ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՄԱՆ  
ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 87-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետի համաձայն

**Պ Ա Ր Զ Ա Բ Ա Ն ՈՒ Մ Է .**

1. Նախընտրական շտաբերի վրա տեղադրվող տեղեկատվական բնույթի տպագիր պաստառները (ցուցանակները), Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով քարոզչական տպագիր նյութեր չեն կարող համարվել, եթե միաժամանակ.

ա) չեն պարունակում թեկնածուին կողմ կամ դեմ քվեարկելուն ուղղված ուղղակի կոչեր,

բ) դրանց թիվը չի գերազանցում այդ ընտրության համար կազմավորված ընտրական տեղամասերի թիվը, իսկ յուրաքանչյուր պաստառի (ցուցանակի) չափը՝ 7 քառ. մետրը:

2. Սույն պարզաբանման 1-ին կետում նշված տեղեկատվական բնույթի տպագիր պաստառները (ցուցանակները) պարտադիր պետք է տեղեկություններ պարունակեն այն կազմակերպությունների և անձանց մասին, որոնք պատասխանատու են դրանց հրատարակման համար, ինչպես նաև տպագրող կազմակերպության և տպաքանակի վերաբերյալ: Առանց նշված վավերապայմանները պարունակող պաստառների (ցուցանակների) հրատարակումն ու տեղադրումը արգելվում է:

3. Սույն պարզաբանման 1-ին կետի «ա» և «բ» ենթակետերի պայմանները չբավարարող և/կամ գերազանցող տպագիր պաստառների (ցուցանակների) համար կատարվող ծախսերը պետք է ներառվեն թեկնածուի նախընտրական հիմնադրամի միջոցներից կատարվող ծախսերում:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

**Գ. Ազարյան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

7 հունվարի 2008թ.  
ք. Երևան

N 1

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆԱԳՐՔԻ 22<sup>1</sup>-ՐԴ ԵՎ  
78-ՐԴ ՀՈՂՎԱԾՆԵՐԻ ՏԱՐԱԲՆՈՒՅԹ ԸՆԿԱԼՈՒՄԸ ԲԱՅԱՌԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐՁԱԲԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ \***

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 22<sup>1</sup>-րդ և 78-րդ հոդվածների դրույթների տարաբնույթ ընկալումը բացառելու նպատակով և հիմք ընդունելով այն, որ.

1. Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 22<sup>1</sup>-րդ հոդվածը քաղաքական, հայեցողական պաշտոններ զբաղեցնող, պետական ծառայող հանդիսացող թեկնածուների համար նախատեսում է սահմանափակումներ, որոնց հաշվառմամբ այս թեկնածուների կողմից պետք է իրականացվի նախընտրական քարոզչությունը:

2. Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 78-րդ հոդվածը սահմանում է Հանրապետության Նախագահի թեկնածուների իրավունքներն ու պարտականությունները, ընդ որում պետական ծառայության մեջ գտնվող կամ տեղական ինքնակառավարման մարմիններում աշխատող թեկնածուների համար ընտրությունների ընթացքում նախատեսում է նաև աշխատանքային պարտականությունների կատարումից ազատում:

3. «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն պետական ծառայությունը մասնագիտական գործունեություն է, որն ընդգրկում է քաղաքացիական ծառայությունը, դատական ծառայությունը, հատուկ ծառայությունները, ինչպես նաև դիվանագիտական և օրենքներով ստեղծված այլ ծառայությունները, իսկ տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված խնդիրներն ու գործառույթներն իրականացվում են մասնագիտական գործունեություն հանդիսացող համայնքային ծառայության միջոցով:

4. «Քաղաքացիական ծառայության մասին» և «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների համաձայն քաղաքական և հայեցողական պաշտոնները պետական ծառայության կամ համայնքային ծառայության պաշտոնների ցանկերում ընդգրկված չեն:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 87-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետի համաձայն

**ՊԱՐՁԱԲԱՆՈՒՄ Է.**

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 22<sup>1</sup>-րդ և 78-րդ հոդվածների միջև հակասություն առկա չէ և այդ հոդվածների պահանջները պետք է ընկալել դրանցում պարունակող բառերի տառացի նշանակությամբ՝ չփոխելով իմաստը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

**Գ. Ազարյան**

\* Ընդունվել է հարցումով

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

18 հունվարի 2008թ.  
ք.Երևան

N 12

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍՊՐԹԻ 18-ՐԴ  
ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ԿԵՏԻ ԵՎ 4-ՐԴ ՈՒ 5-ՐԴ ԳԼՈՒԽՆԵՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ  
ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ՏԱՐԱԲՆՈՒՅԹ ԸՆԿԱԼՈՒՄԸ ԲԱՑԱՌԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐՁԱԲԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 2-րդ կետի և 4-րդ ու 5-րդ գլուխներով սահմանված դրույթների տարաբնույթ ընկալումը բացառելու նպատակով Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 87-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետի համաձայն

**Պ Ա Ր Ձ Ա Բ Ա Ն ՈՒ Մ Է .**

1. Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 2-րդ կետի և 4-րդ ու 5-րդ գլուխներով սահմանված դրույթների միջև հակասություն առկա չէ:
2. Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթը պետք է ընկալել դրանում պարունակող բառերի տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի պահանջները և չփոխելով դրա իմաստը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

**Գ. Ազարյան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ**

9 փետրվարի 2008թ.  
ք.Երևան

N 16

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍՈՒՄԻ 78-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ  
1-ԻՆ ԿԵՏԻ ՏԱՐԱԲՆՈՒՅԹ ԸՆԿԱԼՈՒՄԸ ԲԱՑԱՌԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐՁԱԲԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 78-րդ հոդվածի 1-ին կետի տարաբնույթ ընկալումը բացառելու նպատակով և հիմք ընդունելով այն, որ.

1. Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 78-րդ հոդվածը սահմանում է Հանրապետության Նախագահի թեկնածուների իրավունքներն ու պարտականությունները, ընդ որում պետական ծառայության մեջ գտնվող կամ տեղական ինքնակառավարման մարմիններում աշխատող թեկնածուների համար ընտրությունների ընթացքում նախատեսում է նաև աշխատանքային պարտականությունների կատարումից ազատում:

2. «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն պետական ծառայությունը մասնագիտական գործունեություն է, որն ընդգրկում է քաղաքացիական ծառայությունը, դատական ծառայությունը, հատուկ ծառայությունները, ինչպես նաև դիվանագիտական և օրենքներով ստեղծված այլ ծառայությունները, իսկ տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված խնդիրներն ու գործառնություններն իրականացվում են մասնագիտական գործունեություն հանդիսացող համայնքային ծառայության միջոցով:

3. «Քաղաքացիական ծառայության մասին» և «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների համաձայն քաղաքական և հայեցողական պաշտոնները պետական ծառայության կամ համայնքային ծառայության պաշտոնների ցանկերում ընդգրկված չեն:

4. «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն հանրային ծառայությունն ընդգրկում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից քաղաքականություն իրականացնելը, պետական ծառայությունը և համայնքային ծառայությունը, ինչպես նաև պետական ու տեղական ինքնակառավարման մարմիններում քաղաքացիական աշխատանքը,

Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 87-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետի համաձայն

**Պ Ա Ր Ձ Ա Բ Ա Ն ՈՒ Մ Է .**

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 78-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 2-րդ նախադասությունների միջև հակասություն առկա չէ և այդ կետի պահանջները պետք է ընկալել դրանում պարունակող բառերի տառացի նշանակությամբ՝ չփոխելով իմաստը և բառերը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

**Գ. Ազարյան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ**

17 փետրվարի 2008թ.  
ք.Երևան

N 19

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 24-Ի ԹԻՎ 171-Ն ՈՐՈՇՄԱՆ ԹԻՎ  
2 ՀԱՎԵԼՎԱԾԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐԹԻ  
57-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ԿԵՏԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ՏԱՐԱԲՆՈՒՅԹ ԸՆԿԱԼՈՒՄԸ  
ԲԱՑԱՌԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐՁԱԲԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 87-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետի համաձայն, ինչպես նաև տեղամասային ընտրական հանձնաժողովների բնականոն գործունեությունն ապահովելու նպատակով

**Պ Ա Ր Ձ Ա Բ Ա Ն ՈՒ Մ Է .**

1. Հայաստանի Հանրապետության ընտրողների ցուցակները կազմելու և վարելու կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 9-ից 14<sup>1</sup>-րդ հոդվածներով: Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն համապետական ընտրությունների դեպքում այլ համայնքի հաշվառում ունեցող քաղաքացիներն իրավունք ունեն քվեարկության օրվանից մինչև 7 օր առաջ լիազոր մարմնի կամ նրա համապատասխան ստորաբաժանման ղեկավարին ներկայացնել դիմում՝ ըստ հաշվառման վայրի ընտրողների ցուցակից ժամանակավորապես դուրս գալու և ըստ գտնվելու վայրի ընտրական տեղամասի ընտրողների լրացուցիչ ցուցակում ընդգրկվելու մասին: Լիազոր մարմինը քաղաքացու նշված իրավունքի իրականացումն ապահովելու նպատակով կազմում և ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված կարգով ու ժամկետներում համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին է տրամադրում ըստ գտնվելու վայրի ընտրական տեղամասի ընտրողների լրացուցիչ ցուցակ:

2. Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 57-րդ հոդվածի 3-րդ կետը սահմանում է, որ համապետական ընտրությունների դեպքում քվեարկության ծրարը կնքող և քվեատուփի համար պատասխանատու անդամը քվեարկության ծրարը կնքում և քվեարկության ծրարը քվեատուփի մեջ գցելու հնարավորություն է ընձեռում միայն ընտրողի անձը հաստատող փաստաթղթում տվյալ ընտրությանը մասնակցելու վերաբերյալ դրոշմակնիքի առկայությունն ստուգելուց և դրա բացակայության դեպքում անձը հաստատող փաստաթղթի վերջին էջը դրոշմակնքելուց հետո:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 57-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված՝ «անձը հաստատող փաստաթղթի վերջին էջը» ասելով պետք է հասկանալ ՀՀ քաղաքացու անձնագրի 32-րդ կամ դրան հաջորդող՝ «Անձնագիրը Հայաստանի Հանրապետության սեփականությունն է» բառերը պարունակող էջը: Անձնագրին փոխարինող փաստաթղթի՝ 9-րդ ձևի վրա դրոշմակնիքը դրվում է նկարը պարունակող էջի, իսկ ժամկետային զինծառայողների դեպքում՝ զինվորական գրքույկի վերջին էջի վրա:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

**Գ. Ազարյան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ**

17 փետրվարի 2008թ.  
ք.Երևան

N 20

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆՏՐՈՂԻՆ ԳՐԱՆՑԵԼԻՄ ՆՐԱ ԱՆՎԱՆ ԳԻՄԱՑ  
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՊԶՈՒՄ ԸՆՏՐՈՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐ  
ԸՆՏՐԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐՁԱԲԱՆՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 87-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետի համաձայն

**Պ Ա Ր Ձ Ա Բ Ա Ն ՈՒ Մ Է .**

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 55-րդ հոդվածով սահմանված կարգի համաձայն քվեարկությանը ներկայացած յուրաքանչյուր ընտրող գրանցվում է հանձնաժողովի՝ գրանցման համար պատասխանատու անդամի մոտ գտնվող ցուցակում: Հանձնաժողովի ընտրողների գրանցման համար պատասխանատու անդամը ստուգում է ընտրողի անձը հաստատող փաստաթուղթը, ընտրողների ցուցակում գտնում է նրա անունը, հայրանունը, ազգանունը և հերթական համարը, լրացնում է անձը հաստատող փաստաթղթի տվյալները, և ընտրողը ստորագրում է այդ տվյալների դիմաց: Տվյալ պատասխանատու անդամը ստորագրում է ընտրողի ստորագրության դիմաց՝ իր ստորագրության համար նախատեսված համապատասխան սյունակում: Եթե ընտրողը ներկայացել է քվեարկության և պարզվում է, որ նրա անվան դիմաց առկա են վերը նշված տվյալները և կա ստորագրություն, իսկ անձը հաստատող փաստաթղթում չկա դրոշմակնիք այդ քվեարկությանը մասնակցելու մասին, ապա այդ ընտրողն իր ընտրելու իրավունքը վերականգնում է դատական կարգով:

Դեպքի վերաբերյալ կազմվում է արձանագրություն տեղամասային ընտրական հանձնաժողովի գործավարության մատյանում և Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 45-րդ հոդվածով սահմանված կարգով ու ժամկետում հայտնվում ՀՀ դատախազություն:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

**Գ. Ազարյան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ**

17 հոկտեմբերի 2008թ.  
ք.Երևան

N 56

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐԶԻ  
2-ԲԴ ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏԻ ՏԱՐԱԲՆՈՒՅԹ ԸՆԿԱԼՈՒՄԸ ԲԱՑԱՌԵԼՈՒ  
ՆՊԱՏԱԿՈՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը, Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին կետի տարաբնույթ ընկալումը բացառելու նպատակով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 87-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետի համաձայն

**ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ Է.**

1. Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 2-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն «Հայաստանի Հանրապետությունում ընտրելու իրավունք ունեն 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները...»: Օրենսգրքի 2-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն ընտրել և ընտրվել չեն կարող դատարանի վճռով անգործունակ ճանաչված, ինչպես նաև դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով ազատազրկման դատապարտված և պատիժը կրող քաղաքացիները:

Օրենսգրքի նշված դրույթները վերաբերում են Հանրապետությունում անցկացվող բոլոր ընտրություններին, այդ թվում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին: Օրենսգիրքը Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար քվեարկություններին մասնակցելու, այդ թվում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ, այլ սահմանափակումներ չի նախատեսում, ավելին, օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն ընտրական իրավունքի ցանկացած սահմանափակում հետապնդվում է օրենքով:

2. Օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին նախադասության 2-րդ մասը վերաբերում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող անձանց տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին մասնակցելու իրավունքին: Համաձայն այս դրույթի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ընտրելու իրավունք ունեն նաև համապատասխան համայնքում առնվազն մեկ տարվա հաշվառում ունեցող և փաստացի բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող յուրաքանչյուր ոք:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

**Գ. Ազարյան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

10 ապրիլի 2009 թ.  
ք.Երևան

N 16

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 138.4-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ  
1-ԻՆ ԿԵՏԻ ԳՐՈՒՅԹՆԵՐԻ ՏԱՐԱԲՆՈՒՅԹ ԸՆԿԱԼՈՒՄԸ ԲԱՑԱՌԵԼՈՒ  
ՆՊԱՏԱԿՈՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐՁԱԲԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 138.4-րդ հոդվածի 1-ին կետի դրույթների տարաբնույթ ընկալումը բացառելու նպատակով Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 87-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետի համաձայն

**ՊԱՐՁԱԲԱՆՈՒՄ Է.**

1. Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 122-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ավագանու անդամ կարող է ընտրվել 21 տարին լրացած, տվյալ համայնքում առնվազն վերջին երկու տարվա հաշվառում ունեցող՝ Հայաստանի Հանրապետության ընտրական իրավունք ունեցող յուրաքանչյուր քաղաքացի, իսկ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 2-րդ հոդվածի դրույթների հաշվառմամբ՝ նաև քսանմեկ տարին լրացած, տվյալ համայնքում առնվազն վերջին երկու տարվա հաշվառում ունեցող և առնվազն մեկ տարի փաստացի բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող յուրաքանչյուր ոք:

2. Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 138.4-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Երևանի ավագանու անդամ կարող է ընտրվել 21 տարին լրացած, վերջին երեք տարում Երևան քաղաքում մշտապես բնակվող Հայաստանի Հանրապետության ընտրական իրավունք ունեցող յուրաքանչյուր քաղաքացի, իսկ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 2-րդ հոդվածի դրույթների հաշվառմամբ՝ նաև 21 տարին լրացած, Երևան քաղաքում վերջին երեք տարում մշտապես (փաստացի) բնակվող և Երևան քաղաքում առնվազն մեկ տարվա հաշվառում ունեցող Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող յուրաքանչյուր ոք:

3. «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ իրավական ակտում հակասություն չի համարվում ընդհանուր նորմից բացառության սահմանումը, հետևապես Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 122-րդ հոդվածի 2-րդ և 138.4-րդ հոդվածի 1-ին կետերի միջև հակասություն առկա չէ. այդ կետերի պահանջները պետք է ընկալել դրանցում պարունակվող բառերի տառացի նշանակությամբ՝ չփոխելով իմաստը և բառերը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

**Գ. Ազարյան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

10 ապրիլի 2009 թ.  
ք.Երևան

N 17

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍՊՐԷԻ 10-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 4-  
ՐԴ ԿԵՏԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ՏԱՐԱԲՆՈՒՅԹ ԸՆԿԱԼՈՒՄԸ ԲԱՑԱՌԵԼՈՒ  
ՆՊԱՏԱԿՈՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐՁԱԲԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 10-րդ հոդվածի 4-րդ կետի դրույթների տարաբնույթ ընկալումը բացառելու նպատակով Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 87-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետի համաձայն

**ՊԱՐՁԱԲԱՆՈՒՄ Է.**

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 10-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ կազմվող ընտրողների ցուցակներում ընդհանուր հիմունքներով ընդգրկվում է տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ընտրելու իրավունք ունեցող յուրաքանչյուր ոք, իսկ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ, Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն, ընտրելու իրավունք ունեն 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, ինչպես նաև ընտրություն անցկացվող համայնքում առնվազն մեկ տարվա հաշվառում ունեցող և փաստացի բնակվող 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող յուրաքանչյուր ոք:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

**Գ. Ազարյան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

10 ապրիլի 2009 թ.  
ք.Երևան

N 18

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 18-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 4-ՐԴ ԿԵՏԻ 1-ԻՆ ԵՆՔԱԿԵՏԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ՏԱՐԱԲՆՈՒՅԹ ԸՆԿԱԼՈՒՄԸ ԲԱՑԱՌԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐՁԱԲԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 4-րդ կետի 1-ին ենթակետի դրույթների տարաբնույթ ընկալումը բացառելու նպատակով Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 87-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» կետի համաձայն

**ՊԱՐՁԱԲԱՆՈՒՄ Է.**

Արգելվում է նախընտրական քարոզչություն կատարել և ցանկացած բնույթի քարոզչական նյութ տարածել պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, ինչպես նաև դրանց աշխատակիցներին իրենց աշխատանքային պարտականությունները կատարելիս, իսկ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի իմաստով նաև հանրային ծառայողներին իրենց աշխատանքային պարտականությունները կատարելիս, բացառությամբ սահմանադրական դատարանի անդամների, դատավորների, Հայաստանի Հանրապետության ոստիկանության և Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության, դատախազության մարմինների աշխատակիցների (ծառայողների), զինծառայողների և ընտրական հանձնաժողովի անդամների, որոնց Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 4-րդ կետի 2-րդ և 5-րդ ենթակետերի համաձայն՝ ընդհանրապես արգելվում է նախընտրական քարոզչություն կատարել կամ ցանկացած բնույթի քարոզչական նյութ տարածել:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**  
**ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ**  
**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

**Գ. Ազարյան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

30 ապրիլի 2009 թ.  
ք.Երևան

N 19

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍՈՒՄԻ 111-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ  
ԿԵՏԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 26-Ի ԹԻՎ 12-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ  
ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՄԻ 31-Ի ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ  
ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԻ ԳՐՈՒՅԹՆԵՐԻ ՏԱՐԱԲՆՈՒՅԹ ԸՆԿԱՆՈՒՄԸ ԲԱՑԱՌԵԼՈՒ  
ՆՊԱՏԱԿՈՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 111-րդ հոդվածի 1-ին կետի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2009 թվականի փետրվարի 26-ի թիվ 12-Ա որոշմամբ հաստատված Երևանի ավագանու 2009 թվականի մայիսի 31-ի ընտրությունների նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումների ժամանակացույցի դրույթների տարաբնույթ ընկալումը բացառելու նպատակով Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը հայտնում է.

1. Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքը (այսուհետ՝ օրենսգրք) բաղկացած է երեք մասից: Օրենսգրքի առաջին մասն ընդգրկում է երեք բաժին՝ «ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՐՈՒՅԹՆԵՐ», «ԲԱԺԻՆ 2. ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ» և «ԲԱԺԻՆ 3. ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ» (հոդվածներ 1-63.2): Օրենսգրքի այս մասը սահմանում է նորմեր, որոնք ընդհանուր են Հանրապետությունում անցկացվող բոլոր ընտրությունների համար, եթե օրենսգրքով այլ բան սահմանված չէ:

Օրենսգրքի երկրորդ մասն ընդգրկում է չորս բաժին՝ «ԲԱԺԻՆ 4. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ» (հոդվածներ 64 - 93), «ԲԱԺԻՆ 5. ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ» (հոդվածներ 94 - 119), «ԲԱԺԻՆ 6. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ» (հոդվածներ 120 - 138) և «ԲԱԺԻՆ 7. ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ» (հոդվածներ 138.1 – 138.18): Օրենսգրքի այս մասի յուրաքանչյուր բաժնում սահմանվում են նորմեր, որոնք հատուկ են համապատասխանաբար Հանրապետության Նախագահի, Ազգային ժողովի, տեղական ինքնակառավարման մարմինների կամ Երևանի ավագանու ընտրություններից յուրաքանչյուրի համար:

2. Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2009 թվականի փետրվարի 26-ի թիվ 12-Ա որոշմամբ հաստատված Երևանի ավագանու 2009 թվականի մայիսի 31-ի ընտրությունների նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումների ժամանակացույցը ներառում է միջոցառումներ, իսկ ժամանակացույցի «ՀՀ ԸՕ հոդված» սյունակում նշված են օրենսգրքի հոդվածներ (10, 12, 13, 14, 15, 16, 17, 18, 21, 22, 25, 29, 37, 40.2, 42, 46, 47, 49.1, 49.2, 53, 61, 63, 63.2, 138.5 և 138.14), որոնք սահմանված են օրենսգրքի առաջին մասում և երկրորդ մասի 7-րդ բաժնում:

3. Օրենսգրքի երկրորդ մասի 5-րդ բաժինը (ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ) և այդ բաժնի 111-րդ հոդվածի դրույթները վերաբերում են ՀՀ Ազգային ժողովի ընտրություններին: Երևանի ավագանու անդամի թեկնածուների իրավունքները, պարտականությունները և գործունեության երաշխիքները սահմանված են օրենսգրքի երկրորդ մասի 7-րդ բաժնի (ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ) 138.14-րդ հոդվածում, որի 1-ին կետը սահմանում է՝ «1. Այն թեկնածուները, ովքեր պետական կամ համայնքային ծառայողներ են, գրանցման պահից մինչև ընտրությունների արդյունքների պաշտոնական հրապարակումն ազատվում են իրենց պաշտոնական պարտականությունները կատարելուց:»:

4. «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն պետական ծառայությունը մասնագիտական գործունեություն է, որն ընդգրկում է քաղաքացիական ծառայությունը, դատական ծառայությունը, հատուկ ծառայությունները, ինչպես նաև դիվանագիտական և օրենքներով ստեղծված այլ ծառայությունները, իսկ տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված խնդիրներն ու գործառույթներն իրականացվում են մասնագիտական գործունեություն հանդիսացող համայնքային ծառայության միջոցով: Այս ծառայություններում պաշտոն զբաղեցնող և Երևանի ավագանու անդամի թեկնածու առաջադրված քաղաքացիները որպես թեկնածու գրանցվելու պահից մինչև ընտրությունների արդյունքների պաշտոնական հրապարակումը Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 175-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով պետք է ազատվեն իրենց պաշտոնական պարտականությունները կատարելուց, որի վերաբերյալ կենտրոնական ընտրական հանձնաժողով են ներկայացնում գրավոր տեղեկություն:

Ելնելով վերը շարադրվածից, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 87-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

## **Պ Ա Ր Զ Ա Բ Ա Ն Ո Ւ Մ Է .**

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 111-րդ հոդվածի 1-ին կետի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2009 թվականի փետրվարի 26-ի թիվ 12-Ա որոշմամբ հաստատված Երևանի ավագանու 2009 թվականի մայիսի 31-ի ընտրությունների նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումների ժամանակացույցի դրույթների միջև հակասություն առկա չէ. դրանց պահանջները պետք է ընկալել պարունակվող բառերի տառացի նշանակությամբ՝ չփոխելով իմաստը և բառերը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

**Գ. Ազարյան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

1 հունիսի 2009 թ.  
ք.Երևան

N 61

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 13-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ՍԱՍԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ՏԱՐԱԲՆՈՒՅԹ ԸՆԿԱԼՈՒՄԸ ԲԱՑԱՌԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐՁԱԲԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ**

«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 87-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

**Պ Ա Ր Ձ Ա Բ Ա Ն ՈՒ Մ Է .**

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ընտրությունները նախապատրաստվում և անցկացվում են հրապարակայնորեն:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 14-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ ընտրական հանձնաժողովներն իրավունք չունեն սեփական նախաձեռնությամբ որևէ փոփոխություն՝ ճշտում կամ լրացում կատարել ընտրողների ցուցակներում, այդ թվում՝ լրացուցիչ ցուցակներում:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ընտրողների ցուցակը, բացառությամբ զինվորական մասերում, կալանքի տակ պահելու հիմնարկներում կազմվող և ընտրողների ստորագրած ցուցակների, ազատ է ծանոթության համար:

Ընտրողների կողմից ստորագրված ցուցակները հրապարակման ենթակա չեն, դրանցից պատճեններ չեն հանվում:

Ակնհայտ է, որ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մասի և Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 7-րդ հոդվածի 1-ին ու 14-րդ հոդվածի 8-րդ մասերի միջև հակասություն առկա չէ. Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները պետք է ընկալել պարունակվող բառերի տառացի նշանակությամբ՝ չփոխելով իմաստը և բառերը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

**Գ. Ազարյան**